



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

29 հուլիսի 2011թ.

N 253 - Ա

ք. Արմավիր

ՆՈՐԻԿ ՍԻՐԵԿԱՆՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի վեցերորդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 929-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատարի 2011 թվականի հուլիսի 29-ի զեկուցագիրը.

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Ուսումնական հաստատության կառավարման իրավունքի հավաստագիր չստանալու պատճառով լուծել «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նորիկ Սիրեկանյանի հետ 2005 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 19 աշխատանքային պայմանագիրը:
2. «Նոր Կեսարիայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել Նորիկ Սիրեկանյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2011 թվականի օգոստոսի 2-ից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

